ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Հայաստանի Հանրապետության պետական
կառավարման ակադեմիայի դոկտորանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻԳՐԱՑԻԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Հոդվածում քննության է առնվում «հայկական սփյուռք» ինստիտուցիայի, միջազգային միգրացիոն գործընթացներում դրա տեղ ու դերի, ինչպես նաև սահմանադրաիրավական կարգավիճակի հետ կապված համալիր հարցերն ու խնդիրները: Հոդվածի շրջանակներում նաև անդրադարձ է կատարվում «հայկական սփյուռք» և դրա սահմանադրաիրավական կարգավիճակ հասկացությունների հստակեցման ու սահմանման հարցերին:

Հիմնաբառեր- սփյուռք, հայկական սփյուռք, հայկական սփյուռքի սահմանադրաիրավական կարգավիճակ, իրավական կարգավիճակ, միգրանտների վերաինտեգրում, հայկական սփյուռքի մասին օրենք:

Ներկա դարաշրջանում աշխարհի բնակչության հոծ խմբերի մի երկրից մյուսը զանգվածային տեղաշարժի ակտիվացման հետևանքով, տարբեր երկրներում աննախադեպ աճել է նոր էթնոխմբերի ձևավորումը, որոնց հաճախ անվանում են սփյուռք:

Լայն հասկացությամբ սփյուռքը բնութագրվում է «էթնիկական խմբեր, որոնք բնակվում են պատմական հայրենիքից կամ սփռված հիմնական տարածքից դուրս»[1]: Մեր կարծիքով սփյուռք եզրույթի վերը նշված բնորոշումը անհրաժեշտ է ճշգրտել և լրացնել: Ժամանակակից աշխարհում միլիոնավոր մարդիկ բնակվում են իրենց ծագման երկրներից դուրս, ըստ էության խզելով հոգևոր, տնտեսական և անգամ կրոնական կապերը իրենց հայրենիքի հետ: Միգրանտների այդպիսի զանգվածները, դասական իմաստով, այդպես էլ չձևավորեցին սփյուռք, այլ մնացին իրենց «երազանքի» երկրում տարրալուծվող մարդկանց խմբեր:

Ուստի, սփյուռքի բնորոշմանն անհրաժեշտ է ավելացնել հետևյալ պարբերությունը՝ սփյուռքը մարդկանց հոծ խմբեր են, որոնք հոգևոր-մշակութային, լեզվական և այլ տեսակի սերտ կապերի մեջ են պատմական հայրենիքի հետ:

Այդ իմաստով, գտնում ենք, որ սփյուռք եզրույթի ներքոհիշյալ սահմանումն ավելի ընդգրկուն է, այն է՝ սփյուռքը, դա մեկ ընդհանուր էթնիկ պատկանելիության մարդկանց կայուն համակցություն է, ովքեր ապրում են իրենց հայրենիքից դուրս՝ այլ էթնիկական միջավայրում, և ունեն սոցիալական ինստիտուտներ իրենց համայնքի էթնիկ ինքնությունը պահպանելու, զարգանալու և ընդհանուր գործունեության համար[2]:

Ժամանակակից սփյուռքի տարածականությունը և պետությունների սոցիալ-տնտեսական ու քաղաքական ոլորտներում օտարազգիների դերակատարության աճը հարկադրում է նոր, ավելի հիմնավոր մոտեցում դրսևորել պետությունների հասարակական-քաղաքական կյանքում սփյուռքի դերակատարմանը:Սփյուռքի դերակատարման վերագնահատման գործընթացին մասնակցում են ոչ միայն պետական կառավարման մարմինները:

Որոշակի արժեքային վերագնահատում է նկատվում նաև սփյուռքի խնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող գիտական շրջանակներում: Այսպես, Ժ.Տոսչենկոն սփյուռք հասկացությունը բնութագրում է որպես. «միասնական էթնիկական ծագման մարդկանց կայուն ամբողջություն, որոնք բնակվում են հայրենիքի սահմաններից դուրս այլ էթնիկ շրջապատում (կամ իր ժողովրդի սփռման տարածքից դուրս), ունի տվյալ ազգային ընդհանրության զարգացման սոցիալական սահմանակարգեր»[3]:

«Սփյուռք» հասկացության ընդգրկուն և ժամանակի ոգուն համահունչ է հետևյալ բնորոշումը. «սփյուռքը դիտվում է ոչ որպես ժողովրդի մի հատված, որը բնակվում է իր երկրի սահմաններից դուրս, նրա հետ ունենալով ընդհանուր հոգևոր, մշակութային, պատմական արմատներ և ձգտում է պահպանել տարատեսակ հարաբերություններ պատմական հայրենիքի հետ, այլ ամենից առաջ անդրազգային ցանց է, որը գտնվում է կազմավորման շրջանում, սակայն բովանդակում է հսկայա-

կան սոցիոմշակութային, հասարակական-քաղաքական և տնտեսական կարողություն»[4]:

Հանրագումարի բերելով սփյուռք եզրույթի վերոնշյալ բնորոշումները և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ներկայիս իրավական-քաղաքական փաստացի իրավիճակը, կփորձենք տալ «հայկական սփյուռք» եզրույթի ընդգրկուն բնորոշումը, այն է՝ **հայկական սփյուռքը, դա Հայաստանի Հանրապետության պետական սահմանից դուրս՝ մշտապես կամ տևական ժամանակահատվածում բնակվող, ազգային գաղափարախոսության ելակետային սկզբունքներով առաջնորդվող, լեզվամշակութային, կրոնական և այլ էթնիկ ինքնության պահպանման և զարգացման շահերով առաջնորդվող էթնիկ հայերի կայուն կազմակերպված սոցիալական բջիջների ամբողջությունն է, որն ունի սահմանադրաիրավական կարգավիճակ իր հայրենիքում՝ Հայաստանի Հանրապետությունում:**

Խոսելով հայկական սփյուռքի սահմանադրաիրավական կարգավիճակի մասին պետք է առաջին հերթին վկայակոչենք 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածը, ուր ամրագրված է.

«1. Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը:

2. Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը»:

Վերլուծության ենթարկելով վերոնշյալ սահմանադրաիրավական դրույթները կարող ենք փաստել.

ա) Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքը դիտարկում է որպես սոցիալական-իրավական ինստիտուտ, քանի որ վերջինիս հետ սահմանադրաիրավական պարտականություն ունի համակողմանի կապեր՝ զարգացնելու և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն իրականացնելու հարցում.

բ) Հայաստանի Հանրապետությունը նպատակ է դրել հայկական սփյուռքի միջոցով՝ միջազգային իրավունքի հիման վրա, նպաստել այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը, միևնույն ժամանակ նպաստելով սփյուռքահայերի հայրենադարձությանը, բայց ոչ կազմալուծելով հայկական սփյուռքի գաղթօջախները:

Հիշեցնենք, որ «կարգավիճակ» եզրույթը լատինական բառ է, որը նշանակում է իրավական դրություն, վիճակ[5]:

Իրավագիտությունում իրավական կարգավիճակը բնութագրվում է որպես իրավունքի նորմերով սահմանված նրա սուբյեկտների կեցվածք, նրանց իրավունքների և պարտականությունների ամբողջություն: Իրավական կարգավիճակն այնպիսի կատեգորիա է, որն արտացոլում է պետության, հասարակության, առանձին կոլեկտիվների, շրջապատի մարդկանց հետ սուբյեկտի համահավաք կապերը[6]:

Ամփոփելով վերոշարադրյալը, գտնում ենք, որ **հայկական սփյուռքի սահմանադրաիրավական կարգավիճակը, դա Հայաստանի Հանրապետության պետական-իրավական վերաբերմունքն է հայկական սփյուռքի նկատմամբ, որն արտահայտվում է՝ իրավական, քաղաքական, մշակութային, տնտեսական, սոցիալական, անվտանգության և այլ բնագավառներում հայկական սփյուռքին Հայաստանի Հանրապետությունում հատկացված տեղով և դերով:**

Հայկական սփյուռքը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ այսպես կոչված հին կայացած և նոր ձևավորվող սփյուռքների: Հայկական խոշոր համայնքներ են ձևավորվել ԱՄՆ-ում, գլխավորապես Կալիֆորնիա նահանգում, ուր բնակվում են 600 հազարից ավելի հայազգիներ, Կանադայում՝ 50 հազար մարդ, Ֆրանսիայում (առավելապես Փարիզում, Մարսելում, Լիոնում) 250 հազարից ավելի հայազգիներ, Արգենտինայում 50 հազար հայազգի և Ավստրալիայում 25 հազարից ավելի հայորդիներ:

Մերձավոր Արևելքում նույնպես հայկական սփյուռքը բազմաքանակ է: Իրանում բնակվում է 100 հազարից ավելի հայեր, նույնքան էլ Լիբանանում: Սիրիայում մինչև մեծամասշտաբ պատերազմական գործողությունները, բնակվում էին 80 հազար հայորդիներ: Վերը նշված բոլոր երկրներում հայկական սփյուռքը սոցիալ-տնտեսական առումով բավականին ակտիվ է:

ԱՊՀ տարածքներում հայկական համայնքները ներկայացնում են հետևյալ պատկերը՝ Վրաստանում բնակվում է մոտ 350 հազար հայ, Ուկրաինայում՝ 40 հազարից ավելի[7]:

Վերը բերված տվյալները վերաբերում են սփյուռքահայության 20 տարի առաջվա՝ 1997 թվի իրավիճակին: Մինչդեռ պատերազմի հետևանքով նվազեց հայերի քանակը Մերձավոր Արևելքում և Ուկրաինայում և դրան հակառակ, մեծացավ հայության թվաքանակն արևմուտքի երկրներում:

Տեսանելի է, որ Հայաստանից միգրացիան

առավելապես աշխատանքային է և հիմնականում ուղղված է ԱՊՀ երկրներ: Հայ միգրանտները հիմնականում բնակության վայր ընտրեցին Ռուսաստանի Դաշնությունը:

ՌԴ-ում բնակչության 2002 թվականին անցկացված մարդահամարի տվյալներով Ռուսաստանում բնակվում են 137 հազար Հայաստանի քաղաքացիներ և 1 միլիոն 130 հազար էթնիկ հայեր: Հայերի մոտ 2/3-ը Ռուսաստան են տեղափոխվել վերջին 10 տարիների ընթացքում[8]:

Միգրացիայի զանգվածային հոսքը բնորոշ է Անդրկովկասի բոլոր երկրների համար: Համեմատության համար ասենք, որ միայն Թուրքիայում ներկայումս բնակվում են Ադրբեջանից վերջին տարիներին գաղթաց 3 միլիոն մարդ: Ռուսաստանի Դաշնությունում էլ Ադրբեջանից նոր ժամանածների քանակությունը 600-800 հազար է, որոնցից 400 հազարը բնակվում է Մոսկվայում[9]:

Յուրովի իրավիճակ է ստեղծվել վրացահայության համար, որը հանգամանքների բերումով հարկադրված է մի սփյուռքից՝ Վրաստանից, մեկնելու մի ուրիշը: Ըստ որում, նրանց հիմնական նպատակակետը Ռուսաստանի Դաշնությունն է: Ներկայումս ՌԴ Կրասնոդարի և մի քանի այլ մարզերում վրացահայերի քանակը հասնում է տասնյակ հազարների:

Նկատելի է նաև, որ վրացահայության սակավաթիվ մասն է նախընտրում բնակություն հաստատել պատմական հայրենիքում:

Հետաքրքրություն է ներկայացնում վրացի մասնագետների կողմից իրենց երկրի հայ և ադրբեջանաբնակ համայնքներում անցկացված հարցումների արդյունքները: Ըստ այդ հարցման՝ էթնիկ կողմնորոշման միգրացիան առավել չափով բնորոշ է ադրբեջանցիներին, քան՝ հայերին: Այսպես, հարցմանը պատասխանած վրացահայերի միայն 8% է հակված բնակության մեկնել պատմական հայրենիք, մինչդեռ՝ Վրաստանի քաղաքացի ադրբեջանցիների 33% է ցանկանում մշտական բնակության մեկնել Ադրբեջան: Ըստ վերը նշված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների, վրացահայերի գերակշիռ մասը՝ 70 տոկոսը գերադասում է մշտական բնակության մեկնել ՌԴ[10]:

Արտասահմանյան համայնքներում, հիմնականում հասարակական կազմակերպությունների միջոցով, հայությունը հիմնում է դպրոցներ և վարժարաններ, վերականգնում կամ կառուցում եկեղեցիներ, որոնց միջոցով փորձում է պահպանել իր ինքնությունը: Սակայն սփյուռքահայության գոյատևման հիմնական երաշխիքը հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության առկայությունն է: Հայրենիքում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական տեղաշարժերը՝ անկախ Հայաստանի Հանրապետության և ազգային պետականության հաստատման, վերացրին քաղաքական-գաղափարական շատ խոչընդոտներ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ոլորտում: Սփյուռքի և Հայրենիքի միջև կապերը գործնականում առավել իրատեսորեն դրսևորվեցին 1988թ. վերջերին՝ Հայաստանում տեղի ունեցած աղետից հետո: ՀՀ պետական իշխանություններն սկսեցին Սփյուռքը դիտել նաև որպես ֆինանսական օգնություն հասցնող ռեսուրս: Հայրենիք-Սփյուռք հարաբերություններն էլ ավելի ամրապնդվեցին նաև Արցախյան պայքարով և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցով: Այս բոլորը հզոր ազդակ հանդիսացան Հայրենիք-Սփյուռք հասարակական-քաղաքական տեսանելի հարաբերությունների ձևավորման համար, որն ունի իր նախապատմությունը[11]:

Դրական է այն, որ մի շարք երկրների քաղաքական և հասարակական շրջանակներում գտնում են, որ հայկական սփյուռքը ներկայացնում է բնակության նոր վայրում միգրանտների հաջող ինտեգրման տարբերակ: Այդ նույն աղբյուրներն ընդգծում են, որ հայկական աշխատանքային սփյուռքը իրականացնում է կարևոր սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային առաքելություն: Ամենից առաջ, նա փաստացի «կերակրում է և նյութապես լիովին ապահովում Հայաստանում յուրաքանչյուր 6-րդ տնտեսությունը: Սովորաբար, տրանսֆերտների ծավալի վերաբերյալ որոշակի պատկերացում է տալիս բնակչության շրջանում անցկացված ուսումնասիրությունները: Հայաստանում անցկացված բնակչության հարցումները ցույց տվեցին, որ արտերկրներից հաճախակի դրամական փոխադրումներ են ստանում տնտեսությունների 15 %-ը: Միաժամանակ, փոխանցումները եկամտի հիմնական աղբյուր են ծառայում Հայաստանի տնտեսությունների 8 %-ի համար[12]:

Հիշատակվում է, որ սփյուռքից Հայաստան դրամական փոխանցումները միայն 1997 թվին կազմել է ավելի քան 300 միլիոն դոլար[13]:

Հայտնի է, որ ժամանակակից պայմաններում դրսից դրամական փոխանցումները զգալի դեր են խաղում շատ երկրների տնտեսության կայունացմանը և անգամ առանձին ճյուղերի զարգացմանը: Իրենց հայրենակիցների կողմից դրսից դրամական փոխանցումները դրականորեն են գնահատում անգամ այնպիսի երկրներ, ինչպես Չինաստանը և Հնդկաստանը:

Դրամական փոխադրումներն նշանակալից ազդեցություն ունեն փոքր երկրների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում: Այդ տեսակետից խրախուսելի է արտերկրներում աշխատող մեր հայրենակիցների դրամական փոխադրումները:

Դրամային փոխանցումների ներհոսը Հայաստան ամենից բարձր է եղել 2014 թվականին: Այն կազմել է 2,2 միլիարդ ԱՄՆ դոլար (ՀՀ-ի ՀՆԱ-ի 21 տոկոսը): Համեմատության համար հիշատակենք այդ նույն ժամանակամիջոցում հարևան երկրներ դրսից դրամական փոխադրումների ծավալը: Վրաստանում այն կազմել է 2,1 միլիարդ դոլար (ՀՆԱ-ի 12 %-ը), Ադրբեջանում 1,9 միլիարդ դոլար (ՀՆԱ-ի 2 %-ը):

Դժվար է ասել դրսից դրամային փոխադրումները ինչ ազդեցություններ են թողնում մյուս երկրների տնտեսության վրա: Տեսանելի է մեր հայրենակիցների կողմից դրսից իրականացվող դրամական փոխադրումների էական ազդեցությունը Հայաստանի բնակչության կենսագործունեության բոլոր կողմերի վրա:

Այդ են վկայում նաև միջազգային փորձագիտական եզրահանգումները: Ըստ միջազգային փորձագետների դիտարկումների, Հայաստանը պատկանում է այն 15 երկրների թվին, որի էկոնոմիկան չի փլուզվում արտաքին դրամական փոխադրումների շնորհիվ:

Ավանդույթ է դառձել միգրացիոն խնդիրների շուրջը Անդրկովկասի մասնագետների հեռուստատեսային բանավեճը: Տրամաբանական է, որ հայ և ադրբեջանցի մասնագետներն իրենց հեռակա երկխոսությունում անդրադառնում են նաև իրենց երկրներ արտաքին դրամափոխադրումների հարցին:

Հայ մասնագետն ընդգծում է, որ դրսից դրամափոխադրումները բավարարում են մարդկանց առաջին անհրաժեշտության պահանջարկը, այլ ոչ ասենք՝ նպաստում անգամ փոքրամասշտաբ բիզնեսի ձեռնարկմանը:

Ազգակիցների դրսից դրամական փոխադրումների ավելի մեծ նշանակություն է տալիս ադրբեջանցի փորձագետը: Ըստ նրա, դրսից փոխանցված գումարները հսկայական դեր են խաղում ադրբեջանական հասարակության, հատկապես գյուղաբնակների կյանքում:

Ուշագրավ է, որ ադրբեջանցի մասնագետը դրսից դրամական օժանդակությանը մոտենում է սեփական պետության քաղաքականության գնահատման տեսանկյունից: Ըստ ադրբեջանցու, «դրսից եկող օգնությունը կարևոր է, քանի որ էներգակիրների վաճառքից գոյացած եկամուտները գնում են կառավարող ընտրանու և նրա շրջապատի գրպանները»[14]:

Արտերկրներից միգրանտների դրամական փոխանցումների չափը և ծավալը, այդ գործընթացում ընդգրկված մարդկանց քանակը դժվար է ճշգրտել, քանի որ այն շարունակաբար փոփոխվում է:

Տեսանելի է, որ ՀՀ արտերկրներից ստացած մասնավոր դրամական փոխանցումները օգտագործվում են ազգականների կենսապահովման, ինչպես նաև առողջապահական և կրթական նպատակով:

Թեպետև վիճահարույց է, սակայն մտահոգիչ, օտարազգի աղբյուրների այն տեսակետը, որ Հայաստանում միգրանտների դրամական փոխանցումների հաշվին գոյատևում է ընտանիքների 3-րդ մասը, մինչդեռ եկամուտների կառույցում գործարարությունը կազմում է ընդամենը 14-15 %[15]:

Նման մտայնությունը առկա է նաև ՀՀ բնակչության մի մասի մոտ:

Հայտնի է, որ հայ միգրանտների բացարձակ մեծամասնությունը աշխատանքի է մեկնում ՌԴ: Հայ միգրանտները Ռուսաստանում աշխատում են առավելապես ծառայությունների, առևտրի ոլորտներում: Զգալի քանակ են կազմում նաև շինարար բանվորները: Մինչդեռ հին սփյուռքի ներկայացուցիչները ներգրավված են հիմնականում կրթության, գիտության, առողջապահության, մշակույթի և այլ ոլորտներում:

Հակառակ ՌԴ-ում հայ միգրանտների սոցիալ-տնտեսական առումով ոչ բավարար վիճակին, այնուամենայնիվ, հայ միգրանտների կողմից գոհունակության և լավատեսության կարծիքներ են հնչեցվում:

Նման լավատեսության պատճառներից մեկն էլ այն է, որ հայ միգրանտները, անկախ բնակության վայրից, վարդագույն գույներով են ներկայացնում իրենց կեցությունը արտերկրում: Հազվադեպ կարելի է հանդիպել այն իրողությանը, երբ արտերկրում բնակվողը հայրենիքում գտնվող հարազատներին պատմի իր զրկանքների, նվաստացուցիչ աշխատանքի և անգամ հալածանքների մասին:

Կարելի է հասկանալ միգրանտների հոգեբանությունը: Նրանք չեն ցանկանում խոստովանել հայրենիքը անվերադարձ լքելու սխալ որոշման մասին: Մյուս կողմից էլ, գլուխ են բարձրացնում էգոիստական տրամադրությունները: Միգրանտը օտարության մեջ իր միայնակությունը փարատելու նպատակով փորձում է արտագաղթի գայթակղեցնել Հայաստանում բնակվող մտերիմներին:

Իրականում ինչպիսին են արտերկրներում բնակություն հաստատած հայ գաղթականների բնակության, աշխատանքային պայմանները և բարոյահոգեբանական վիճակը:

Քանի որ այս առումով իրավագետների, սոցիոլոգների, տնտեսագետների և հոգեբանների կողմից ուսումնասիրություններ չեն կատարվել, մնում է տրամաբանությունից ելնելով դատողություններ անել:

Հայտնի է ՌԴ-ում հայ միգրանտների մեծա-

քանակությունը: Նկատելի է նաև, որ հենց այդ երկրում աշխատող հայ միգրանտներն ամենից հաճախ են հանդես գալիս իրենց կեցության մասին լավատեսական հայտարարությունները:

Իրականում հենց միգրացիայի խնդիրները ուսումնասիրող ռուսաստանցի մասնագետներն են հերքում իրենց երկրում արտերկրի քաղաքացիների և անգամ տեղաբնակ առանձին ազգերի նկատմամբ բարեհոգի վերաբերմունքի դրսևորման մասին:

ՌԴ-ում 1990-2002 թվականներին ռուսազգի բնակչության շրջանում անցկացրած սոցիոլոգիական հետազոտության արդյունքում պարզվեց, որ հարցման ենթարկվածների 40%-ից ավելին խիստ բացասաբար է տրամադրված չեչենների և գնչուների նկատմամբ:

Ռուսների կողմից այլ երկրների քաղաքացիների նկատմամբ բացասական վերաբերմունքի հաջորդ թիրախը ադրբեջանցիներն են: ՌԴ-ում 1998 թվականին նրանց նկատմամբ ժխտողական վերաբերմունք դրսևորեցին հարցման ենթարկվածների 48%-ը:

Վրացիների և հայերի նկատմամբ ռուսաստանցիների բացասական վերաբերմունքը 27% է: Մինչդեռ հարցման ենթարկվածներն ավելի բարեհաճ վերաբերմունք արտահայտեցին միջինասիացիների նկատմամբ: Բացասական մոտեցման արժանացան նրանց ընդամենը 20-22 %-ը:

Ռուսները ավելի բարեհաճ գտնվեցին հրեաների և էստոնացիների նկատմամբ: Նրանց նկատմամբ մերժողական վերաբերմունք դրսևորեցին հարցման ենթարկվածների 15-20 %-ը[16]:

Հետաքրքիր է փորձագետներից յուրաքանչյուրի գնահատականն արտերկրներում բնակվող և աշխատող իրենց հայրենակիցների ապրելակերպի վերաբերյալ:

Հայ մասնագետը հիշատակում է, որ հազիվ թե գտնվի մի երկիր, որտեղ մեր գաղթյալներին ընդունեն գրկաբաց, ուստի հայ գաղթականների առջև նույնպես առաջնահերթային խնդիր է ընդունող երկրում կարգավիճակի հստակեցումը:

Հայ մասնագետը տարբերություն է տեսնում ներգաղթյալների իրավիճակում արևմուտքում և ասենք ՌԴ-ում: Ըստ որում, եթե ՌԴ-ում հայ միգրանտների առջև ծառացած դժվարությունները ներգաղթյալի աշխատանքի ցածր վարձատրությունն է, ապա եվրոմիության անդամ երկրներում առաջնահերթայինը մուտքի արտոնություն ստանալն է:

Դիտարկումները ցույց են տալիս, որ արտերկրներում Հայաստանի քաղաքացիների բացարձակ մեծամասնությունը հարգում է տեղի օրենքները, ընդհանրապես մոտենում ընդունող երկրների մշակույթին և սովորույթներին:

Թեպետև Հայաստանից արտագնա աշխատանքի մեկնողները գրեթե խնդիրներ չեն հարուցում ընդունող երկրների իրավապահ մարմիններին և հասարակությանը, այնուամենայնիվ միջազգային կառույցները փորձում են Հայաստանին աջակցել մեղմելու արտագաղթի բացասական հետևանքները:

Ընդունող երկրներում և հատկապես արևմուտքում, տեղի հասարակության մեջ ընդգրկվելու համար, անհրաժեշտ է տիրապետել տվյալ պետության պաշտոնական լեզվին և գիտակ լինել ժողովրդի մշակութային արժեքներին և սովորույթներին:

Հայ փորձագետը արդարացի է համարում, որ արտերկրում իր հայրենակիցները կարող են ինտեգրվել միայն վերը նշված պահանջների համապատասխանության դեպքում: Այլ կերպ ասած, ընդունող երկրում հայի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի դրսևորման պատասխանատվությունը դնում է հայրենակիցների խոհեմ և օրինապահ վարքագիծ դրսևորելու վրա:

Միակողմանի մոտեցում է դրսևորում ադրբեջանցի մասնագետը: Ըստ ադրբեջանցի փորձագետի, առաջնայինը ոչ թե ադրբեջանցի գաղթականների անձնական վարքագիծն է, այլ նրանց ընդունող երկրների սոցիալ-քաղաքական վիճակի կայունությունը: Ներքաղաքական կայունության դեպքում իբր ադրբեջանցի միգրանտների առջև որևէ խնդիրներ չեն առաջանում:

Ադրբեջանցի մասնագետը քննադատաբար է տրամադրված ՌԴ-ում ադրբեջանցի համայնքի նկատմամբ մերժողական վերաբերմունքի հանդեպ: Ըստ փորձագետի, ՌԴ-ում իրավապահ մարմինների անօրինական գործողությունների հետևանքով ծանր են ադրբեջանցի միգրանտների կեցության պայմանները: Նկատելի է նաև, որ իշխանությունների կողմից բախումներ են հրահրվում տեղաբնակների և եկվորների միջև:

Ադրբեջանցի փորձագետը հակված է գովաբանել արևմուտքի երկրների կողմից ներգաղթյալների հանդեպ ցուցաբերվող հանդուրժողական վերաբերմունքը: Սակայն հարկադրված է խոստովանել,որ լեզվական խնդիրների պատճառով ադրբեջանի գյուղաբնակները հարկադրաբար մեկնում են ՌԴ:

Կարելի է հետևություն անել, որ հայ փորձագետը արտերկրներում հայրենակիցների առջև ծագած խոչընդոտների պատճառը բացատրում է ազգակիցների մի մասի ոչ պատշաճ մասնագիտական պատրաստակամությամբ և երկրում ընդունված վարքագծից առանձին խախտումներով: Ադրբեջանցի փորձագետը հակված է արտերկրներում

ադրբեջանցիների անհաջողության միակ պատճառը տեսնել տեղի բնակչության և իրավապահ մարմինների ոչ մարդասիրական գործողություններում:

Հակառակ սոցիալ-տնտեսական իրավիճակի, ներքաղաքական և արտաքին քաղաքական զարգացումների հիմնովին տարբերությանը, արտագաղթի հարցում զարմանալիորեն համընկնում են երկու երկրների մասնագետների տեսակետները:

Այսպես, Հայաստանից զգալիորեն նվազ քանակով և Ադրբեջանից առավել չափով մարդիկ են մեկնել արտերկրներ բնակության և աշխատելու նպատակով: Ինչոր չափով համընկնում են նաև մշտական բնակության համար երկիր ընտրելու նախասիրությունը: Հայաստանից և Ադրբեջանից գաղթականների մեծ մասը գերադասում են մեկնել ՌԴ: Համանման են արտերկրում աշխատող երկու ազգերի ներկայացուցիչների վարքագիծը. դրամական փոխադրման միջոցով աջակցել հայրենիքում բնակվող մտերիմներին:

Բնակչության սակավաքանակությունը լրջագույն մարտահրավեր է Հայաստանի համար: Նման իրավիճակում բնակչության շրջանում տարածում գտած արտագաղթը բացասական հետևանքներն է թողնում ինչպես մեկնողների, այնպես էլ տեղաբնակների ճակատագրում:

Հայաստանից գաղթածները արտերկրներում հարկադրված են լուծել կեցության և աշխատանքի բարդ խնդիրներ, հաղթահարել շարունակաբար առաջացող խոչընդոտները: Իրականում, արտերկրներում խեղվում են գաղթականների և նրանց ընտանիքների անդամների ճակատագրերը, խաթարվում ընտանիքի ձևավորված բնականոն կենսակերպը:

Նման պարագայում մեր կողմից դասակարգված սփյուռք հասարակությունը Հայաստանից արտագաղթածների համար ձևավորման տարիների երկարատև ուղի պետք է անցնի:

Ի տարբերություն Հայաստանից նոր գաղթականների, այսպես կոչված հին սփյուռքը տարբեր երկրներում զգալի դերակատարում ունի: Սփյուռքահայությունը ընդգրկված է բազմաթիվ երկրների կենսագործնեության բոլոր ոլորտներում: Նշանակալից է հայազգիների ներդրումը տարբեր պետությունների կրթության, գիտության, մշակույթի և անգամ պետական կառավարման ասպարեզներում: Սփուռքահայության միջազգային ասպարեզում քաղաքական կշռի դրսևորումներից է նաև այն, որ հակառակ Թուրքիայի դիմադրությանը, մի շարք պետություններ ճանաչել և դատապարտել են հայոց ցեղասպանությունը: Մարդասիրական այդ գործընթացին են միացել նաև ԱՄՆ-ի նահանգների գերակշիռ մասի նահանգային խորհուրդները: Ավելին, ԱՄՆ-ի նահանգային խորհուրդներից ոմանք ճանաչել են նաև Արցախի անկախ պետականությունը: Մի շարք երկրների՝ Ֆրանսիայի, Ավստրալիայի, Արգենտինայի և անգամ ՌԴ պաշտոնական աղբյուրները նշում են վերջին ժամանակները հայկական սփյուռքի քաղաքական ազդեցության աճն իրենց պետություններում:

Նշանակալից է այն, որ հայկական սփյուռքը մայր հայրենիքի հետ պահպանում են ազգակցական, լեզվամշակութային և անգամ տնտեսական կապերը: Սփյուռքում գործում են հայալեզու դպրոցներ, հայկական կրոնական հաստատություններ, ազգագրական խմբակներ: Նրանք մշակութային, լուսավորչական ակտիվ գործունեություն են ծավալում սփյուռքահայության շրջանում:

Հատկանշական է, որ ի տարբերություն արտերկրներում սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական ոլորտներում հայկական սփյուռքի ունեցած զգալի ազդեցության, օտարերկրյա գիտական շրջանակները և ԶԼՄ-ները նույնպիսի հատկանիշներ չեն վերագրում ասենք Ադրբեջանական և Վրացական սփյուռքերին:

Սփյուռքահայության առանձին հատված են կազմում Մերձավոր Արևելքից Հայաստան ժամանած հայ փախստականները: Նրանք ոչ միայն չխաթարեցին ՀՀ-ի հասարակական կյանքի նորմալ ընթացքը, այլև հայրենասիրության և օրինապահության դրական լիցք հաղորդեցին հայաստանաբնակներին:

Որոշ վերապահումով, կարելի է կիսել այն տեսակետը, որ «ըստ տեսության՝ մեկ ազգ - մեկ ժողովուրդ կյանքը դյուրին է մինչև այն պահը երբ բացակայում է միգրանտների զանգվածային հոսքը երկիր: Դժվարությունները սկսվում են երբ «եկվորներին ազնիվ թելադրանքով հնարավորություն են տալիս տարրալուծվել տեղի հանրության մեջ, իսկ ժամանակի ընթացքում ստացվում է անսպասելի արդյունք»[17]:

Շատ պետություններում արտերկրներից միգրանտների զանգվածային հոսքի պայմաններում տեղի հասարակության մեջ առաջանում են խմորումներ և ծագում բախումներ տեղաբնակների և միգրանտների միջև: Այդ իմաստով բացառություն են կազմում հայերը, որոնք գրկաբաց են ընդունում մայր հայրենիք ժամանած յուրաքանչուր սփուռքահայի:

Ադրբեջանից և Սիրիայից փախստականների այն հատվածը, ովքեր գերադասեցին մշտապես բնակվել մայր հայրենիքում, վերահինտեգրվեցին կամ դեռ վերահինտեգրվում են հասարակությանը: Իսկ «միգրանտների վերահինտեգրում» ասելով հասկանում ենք սոցիումից տևական ժամանակով ֆիզիկապես անջատված և ներկայումս այլ սոցիումի մշակութային տարրեր կրող կամ երբևէ այդ սո-

ցիումում ֆիզիկապես չգտնված (օրինակ՝ ազգությամբ այն հայերը, ովքեր ծնվել և ապրում են Հայաստանի սահմաններից դուրս) բայց ընդհանրական մշակութային տարրեր կրող անձանց ֆիզիկական միացումը սոցիումին, որոնք միևնույն ժամանակ ադապտացվում են իրենց էթնիկ կամ այլ առանձնահատկությունով պայմանավորված սոցիումային մշակույթի ներկայիս իրավիճակին և լինելով երկսոցիում մշակույթի կրող, ակամայից ազդեցություն (դրական և բացասական) են ունենում իրենց հիմնական սոցիումային պատկանելիության մշակույթի վրա (*Հեղինակի սահմանումն է*):

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ հայկական սփյուռքին Հայաստանի Հանրապետությունում սահմանադրաիրավական կարգավիճակ տալուց հետո, անհրաժեշտ է ընդունել հայկական սփյուռքի մասին օրենք, որով ամփոփ և ընդգրկուն կերպով կսահմանվի.

ա) «Հայկական սփյուռք» ինստիտուցիայի ընդգրկուն հասկացությունը, որի կապակցությամբ կարող ենք առաջարկել սույն աշխատանքում մեր կողմից վերոնշյալ եզրույթին տրված բնորոշումը.

բ) Հայաստանի Հանրապետության հստակ պարտականությունները հայկական սփյուռքի հանդեպ.

գ) Հայաստան-Սփյուռք փոխկապակցված շահերի հիման վրա գործունեության սկզբունքներն ու դրանց արդյունքների չափելիության սահմանները և այլն:

---

[1] Арскентьев А.Р., Арскентьев Б.А., Этнические группы и диаспоры Ставрополья, Ставрополь, СГУ, 1977, стр.7.
[2] Баранов Н. “Миграция, диаспоры и проблемы этнических меньшинств”. http://nicbar.ru/politology/study/kurs-etnopolitologiya/295-lektsiya-10-migratsiya-diaspory-i-problemy-etnicheskikh-menshinstv
[3] Тосченко Ж., Диаспоры как объект социальной политики//постсоветское пространство: суверенизация и интеграция, М., 1997, стр. 80.
[4] Российская диаспора в странах СНГ и Балтии: состояние и перспективы, М., 2004, стр. 11.
[5] Современный словарь иностранных слов. Толкование, словоупотребление, словообразование, этимилогия, М., Вече 2006, С. 577.
[6] Прудникова Т.А., Редкоус В.М., Акимова С.А. Административно-правовой статус органов исполнительной власти (На примере миграционных служб), М., Закон и право, 2012, С. 3.
[7] Chlird G., Rageau J. P. The Pengun Atlas of Diasporas. N.Y., 1997. P. 89.
[8] Полоскова Т.В. Новые диаспоры в России (внутри- и внешнеполитические аспекты) //Россия и ее соседи: проблемы этнических меньшинств. Проблемно-тематический сборник. М., РАН ИНИНОН, 2000, стр.52.
[9] Migration trends in Eastern Europe and Central Azia: 2001-2002 Review, Geneva: IOM, 2002. P. 59-61.
[10] Сванидзе Г., Сванидзе Д., Эмиграция из Грузии (результаты социологического опроса) Миграция на Кавказе. Материалы конференции, Ереван, 2003, стр. 128.
[11] Ստալ Սարդարյան «Հայկական սփյուռքի արդի հիմնախնդիրների շուրջ», http://www.noravank.am/upload/pdf/7.Stal_Sardaryan_01_2014.pdf:
[12] Pannossian R. Courting a Diaspora: Armenia-Diaspora Relations since 1998 //International Migration and Sending Countries: Perceptions, Policies and Transnational Relations / Ed. By E. Ostergaagd-Nielsen. Palgrave, 2003. P. 143.
[13] Рязанцев С.В., Трудовая миграция в странах СНГ и Балтии: тенденции, последствия, регулирование, часть 2, М., 2007, стр 290.
[14] Миграция в Армении и Азербайджане сегодня/ общественные диалоги. 21.03.2011
[15] Рязанцев С.В., Трудовая миграция в странах СНГ и Балтии: тенденции, последствия, регулирование, часть 2, М., 2007, стр. 457.
[16] Центр “Этносфера”. Паим Э.К. О механизмах формирования этнофобии и мигрантофобии, М., 23.03.2016, с.1/4
[17] Авакьян С. А., Размышления конституционалиста, избранные статьи, М., 2010, стр. 440.

Аппот Айрапетян
Кандидат юридических наук, доцент
Докторант академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Миграция в Республике Армения в условиях модернизации конституционной и международной правовой системы (на примере армянской диаспоры)

В статье рассматривается институция «армянской диаспоры», ее место и роль в международных миграционных процессах, а также комплексные вопросы и проблемы, связанные с конституционно-правовым статусом. В рамках статьи уделяется внимание понятию «армянская диаспора», а также разъяснению и определению вопросов ее конституционно-правового статуса.

Ключевые слова: *диаспора, армянская диаспора, конституционно-правовой статус армянской диаспоры, юридический статус, реинтеграция мигрантов, закон об армянской диаспоре.*

Ashot Hayrapetyan
PhD in law, Associate professor
Doctoral in the Public Administration
Academy of the Republic of Armenia

SUMMARY

Migration in the process of modernization of constitutional and international legal systems in the Republic of Armenia (On the example of Armenian Diaspora)

In this article author discussed complex issues and problems regarding the institute of “the Armenian diaspora”, its role in the international migration process and its constitutional status. The article also touches upon the issues of clarification and definition of “the Armenian Diaspora” and constitutional status concepts.

Keywords: *Diaspora, the Armenian Diaspora, constitutional status of the Armenian Diaspora, legal status, migrants’ reintegration, law on Armenian diaspora.*